AURORA HUMANITARIAN INITIATIVE

Մարտի 5, 2026 թ.

Ձեզ ենք ներկայացնում «Ավրորայի» ամենամսյա **«Երախտագիտությունն՝ ի գործ»** տեղեկատվական հավելվածը: Վերջին մեկ ամիսը հագեցած էր իրադարձություններով ու քննարկումներով: Մեզ անդրադարձան նաեւ լրատվամիջոցները:

Մենք եղանք Մյունխենում

- Մեր պատվիրակությունը ներկա էր Մյունխենի անվտանգության համաժողովին: Այնտեղ ես մասնակցեցի պանելային քննարկման, որը վարում էր Նորվեգիայի Նոբելյան ինստիտուտի տնօրեն Քրիստիան Բերգ Հարփվիքենը: «Մո Իբրահիմ» հիմնադրամի հիմնադիր եւ նախագահ Մո Իբրահիմի, XPRIZE-ի գլխավոր տնօրեն Անուշե Անսարիի, Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արմին Լաշեթի հետ քննարկեցինք, թե ինչպես են մրցանակները՝ ամեն մեկը յուրովի, դիմակայում ներկա բարդ իրավիճակում:

- Մյունխենի անվտանգության համաժողովին մեր պատվիրակության կազմում էր 2019 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր **Միրզա Դինային**: Երբ ինձ հարցրին, ինչպես է «Ավրորան» չափում իր հաջողությունը, ես խոսեցի Իրաքում Միրզայի թողած երկարատեւ ազդեցության մասին: Նա ավելի քան 100.000 մարդու կյանք է փոխել: Եթե այդ դահլիճում ներկաներից յուրաքանչյուրը «մարդասիրական գործիչ» արտահայտությունը հետագայում լսելիս հիշի Միրզային, նշանակում է մենք եւս մի քայլ մոտեցել ենք մեր երազած աշխարհին, որտեղ մարդկության լավագույն օրինակը հենց համայնքներում մարդասիրական աշխատանք իրականացնողներն են:

Ձեր կարծիքը կարեւոր է. Ի՞նչն է համարվում հաջողություն մարդասիրության ոլորտում: Կա՞ այսօր մրցանակների անհրաժեշտություն:

info@aurorahumanitarian.org

Մենք պատմեցինք մեր մասին

- Գերմանիայում առիթ ունեցա խոսելու Devex մեդիա հարթակում, որտեղ քննարկեցինք՝ ինչպես գտնել փոխզիջում պաշտպանության եւ մարդասիրական օգնության ծախսերի միջեւ (առաջ ընկնելով՝ ասեմ, որ երկուսն էլ կարող ենք ու պետք է անենք՝ *նույնիսկ եւ հատկապես հիմա*):

- 2025 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր **բժիշկ Ջամալ Էլթայեբը** Scripps News-ին պատմեց՝ ինչու է պատերազմի մեջ հայտնված Սուդանում մնալն ու վիրավորներին բժշկելը ճիշտ որոշում:

- Ինձ համար պատիվ էր հայտնվել Forbes Women-ի 2026 թ. «Մարդասիրական առաջնորդությունը վերահիմաստավորող կանանց» շարքում՝ 2021 թ. «Ավրորայի» դափնեկիր Ջուլիեն Լուսենգեի, Պարենի համաշխարհային ծրագրի գործադիր տնօրեն Սինդի Մքքեյնի, Գթասրտության կորպուսի գլխավոր տնօրեն Թջեյդա Մքքենայի, «Սոցիալական ազդեցություն եւ ՅուՓիԷս» հիմնադրամի նախագահ Նիկի Քլիֆթոնի, «ՔԵՅՐ» մարդասիրական կազմակերպության նախագահ եւ գլխավոր տնօրեն Միշել Նանի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Քեթրին Ռասելի հետ:

Միացեք քննարկմանը. ի՞նչ եք կարծում՝ որն է պաշտպանության եւ մարդասիրական օգնության միջեւ փոխզիջումը: Ո՞վքեր են այն կանայք, որոնք առաջնորդում են մարդասիրության ոլորտը 2026 թվականին եւ դրանից հետո:

info@aurorahumanitarian.org

Եվ վերջին իրադարձությունների մասին

- Մեր թիմի կեսից ավելին աշխատում է Երեւանում, Միջին Արեւելքում գործունեություն են ծավալում «Ավրորայի» 13 հերոսներ: Մենք ուշի-ուշով հետեւում ենք տարածաշրջանային զարգացումներին:

- Մեր աջակցությունն ենք հայտնում տուժած համայնքներին, հատկապես խիզախ բժիշկներին, ուսուցիչներին, փաստաբաններին, ակտիվիստներին՝ այն բոլոր մարդասերներին, որոնք այս անկայուն ժամանակներում կանգնած են իրենց ընտանիքների, ընկերների եւ հարեւանների կողքին:

Ուղարկեք այս տեղեկագիրը նաեւ ձեր ընկերներին: Եթե այս տեղեկագիրը փոխանցել են ձեզ, բաժանորդագրվեք՝ այն մեզնից ստանալու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ

«Յենենգա» դպրոց, Բուրկինա Ֆասո

Աշխարհի տարբեր անկյուններում գլուխ են բարձրացրել *«ոչ մարդասերները»*: Որքան ակտիվ են նրանք, այնքան ամուր ենք մենք մեր հանձնառության մեջ՝ լինել մարդասերների կողքին եւ օգնել նրանք շարունակելու իրենց կենսական աշխատանքը: Մեր ուշադրության կենտրոնում «Ավրորայի» հերոսներն են, նաեւ բոլոր այն մարդիկ ու երեխաները, որոնց նրանք բժշկում են եւ օգնում ոտքի կանգնել:

Այդ երեխաներից մեկն Իսան է (անունը փոխված է՝ անվտանգության նպատակով): Նա ծնվել է Բուրկինա Ֆասոյում: Հաշմանդամության պատճառով կրթական հաստատություն հաճախելը մեծ խնդիր էր նրա համար: 2024 թ. «Ավրորայի» դափնեկիր **բժիշկ Դենիս Մուկվեգեի** աջակցությամբ Իսան կարողացավ հաճախել նախակրթարան, ստանալ անհրաժեշտ խնամք եւ արժանապատիվ վերաբերմունք: Նա սովորում է իր կարողացածի չափով: Մենք չգիտենք, թե սա ուր կտանի տղային, բայց դասարան մտնելու խոչընդոտը հաղթահարված է, ու դա խոստումնալից սկիզբ է նրա համար:

Մենք ամեն ինչ անում ենք, որ Իսան եւ «Յենենգա» դպրոցի նրա դասընկերները մեծանան ավելի մարդասեր աշխարհում եւ գուցե սա ոգեշնչի նրանց հետագայում զբաղվել մարդասիրական գործունեությամբ: Մեզ համար մարդասիրության առանցքում մարդն է, իսկ **մարդասիրությունը յուրաքանչյուր մարդու մեջ** է: Ներկայիս անկառավարելի թվացող ժամանակաշրջանում լավագույն պահն է ամրապնդելու մեր համընդհանուր մարդասիրական ոգին: Հենց դրա համար մենք ընդլայնում ենք մեր ազդեցությունը:

Մի քանի շաբաթ անց մենք կիրապարակենք մեր նոր տեսլականը, առաքելությունն ու փոփոխությունների տեսությունը՝ «Ավրորա 2.0»-ը, ինչպես մենք ենք ասում: Մանրամասները կլինեն մեր հաջորդ՝ «*Երախտագիտությունն՝ ի գործ*» տեղեկագրում:

Մինչեւ այդ, **օգնեք մեզ աջակցելու մարդասերների ավելի լայն շրջանակի**: Միջազգային մարդասիրական կարիքները մեծանում են, իսկ «Ավրորան» արձագանքում է՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով ավելի շատ մարդասիրական գործիչների, որոնք անմիջական, արդյունավետ եւ երկարատեւ օգնություն են տրամադրում համայնքներում:

«Ավրորայի» հերոսները տեղում են ավելի շուտ, քան կժամանեն միջազգային դերակատարները, նրանք շարունակում են մնալ այնտեղ, երբ բոլորն արդեն հեռացել են: **Նրանք մեր աջակցության կարիքն ունեն:** Միասին մենք կարող ենք ծառայել ավելի շատ մարդասիրական գործիչների եւ նրանց համայնքներին:

ԱՋԱԿՑԵՔ ԱՎՐՈՐԱՅԻՆ

Ջերմ բարեմաղթանքներով՝

Արմինե Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար

«Ավրորա» գրքի ակումբ

«Ավրորայի» հերոսներն իրենց արտասովոր պատմությամբ ու խիզախ արարքներով բազմաթիվ հեղինակների են ոգեշնչել: Այսուհետեւ մենք ձեզ կներկայացնենք այն գրքերը, որոնք պատմում են այդ բացառիկ հերոսների մասին:

Հզոր մեկնարկ. Եկեք սկսենք Դեյվիդ Թուլի՝ 2016 թ. «Ավրորա» մրցանակի առաջին դափնեկիր **Մարգարիտ Բարանկիցեի** մասին գրքով. «Սերն ինձ դարձրեց հնարամիտ. Մեգի Բարանկիցեի պատմությունը»: Փրկվելով Բուրունդիի էթնիկ բռնություններից՝ Մարգարիտը հիմնեց Maison Shalom խաղաղության տունը: Նա փրկել է տասնյակ հազարավոր մարդկանց, կերակրել ու ապաստան տվել նրանց՝ վերափոխելով շատերի կյանքը: Բարանկիցեի պատմությունը վկայություն է այն մասին, որ սերն ու համարձակությունը կարող են վերադարձնել հույսն ու վերականգնել համայնքները:

Ընթերցանության մեկ այլ հետաքրքիր նյութ. Vanity Fair-ում կարդացեք «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ **Չելսի Քլինթոնի** հուզիչ անդրադարձը 2021 թ. «Ավրորայի» հերոս եւ մրցանակի հավակնորդ, երջանկահիշատակ **բժիշկ Փոլ Ֆարմերի** թողած ժառանգությանը: Նրա փիլիսոփայության առանցքում խնամքն իրականացնողի պատասխանատվությունն է՝ մնալ կարիքավորի կողքին այնքան, մինչեւ նա ոտքի կանգնի եւ ինքը շարունակի այդ առաքելությունը: Սա հրաշալիորեն նկարագրում է այն անձնվեր համագործակցությունը, որն ընկած է «Ավրորայի» հերոսների գործունեության հիմքում ամբողջ աշխարհում: Մշտապես շնորհակալ ենք Փոլին իր ներշնչանքի համար, եւ Չելսիին՝ նրա ոգին ապրեցնելու համար:

Հավանեցի՞ք, կցանկանա՞ք ավելի շատ նման նյութեր տեսնել: Գրե՛ք մեզ:

info@aurorahumanitarian.org

ԱՋԱԿՑԵՔ

Դեռ չե՞ք բաժանորդագրվել: Հիմա ճիշտ պահն է:

AuroraHumanitarian.org

AuroraLuminaries.com